## ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ № 3

## ՀՀԱՄՄՀ-ԳՀԾՁԲ-26/52 ԾԱԾԿԱԳՐՈՎ ԳՆՄԱՆ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻ ԳՆԱՀԱՏՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԻՍՏԻ

**ք. Մեծամոր**

**05 մայիսի 2026թ.**

2026թ. մայիսի 05-ին ՀՀ Արմավիրի մարզի Մեծամոր քաղաքի վարչական կենտրոն 4 հասցեում գտնվող Մեծամորի համայնքապետարանի շենքում տեղի ունեցավ ավտոմեքենաների վերանորոգման ծառայությունների ձեռքբերման թիվ ՀՀԱՄՄՀ-ԳՀԾՁԲ-26/52 ծածկագրով գնման ընթացակարգի (այսուհետ՝ Ընթացակարգ) գնահատող հանձնաժողովի (այսուհետ՝ Հանձնաժողով) նիստը:

Հանձնաժողովի նիստին մասնակցում էին Հանձնաժողովի հետևյալ անդամները.

| | |
|---|---|
| Ա. Թորոսյան՝ | Մեծամորի համայնքի «Մեծամոր Բարեկարգում» ՀՈԱԿ-ի փոխտնօրեն, |
| Կ. Մախյան՝ | Մեծամորի համայնքի «Մեծամոր Բարեկարգում» ՀՈԱԿ-ի տնօրենի տեղակալ, |
| Հ. Պետրոսյան՝ | Մեծամորի համայնքի «Մեծամոր Բարեկարգում» ՀՈԱԿ-ի տնօրենի օգնական, |
| Ա. Հակոբյան՝ | Մեծամորի համայնքապետարանի աշխատակազմի ֆինանսատնտեսագիտական և գնումների բաժնի գլխավոր մասնագետ, |
| Ա. Զաքարյան՝ | Մեծամորի համայնքի «Մեծամոր Բարեկարգում» ՀՈԱԿ-ի ուղության պետ: |

Հանձնաժողովի նիստը նախագահում էր Ա. Թորոսյանը, որին ներկա էր Հանձնաժողովի քարտուղար, «ՓՐՈՄՈՈՒՇՆ» ՍՊԸ-ի ներկայացուցիչ՝ Լ. Հայրապետյանը:

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ Հանձնաժողովի կազմը բաղկացած է հինգ անդամից և նիստին էլ մասնակցել են բոլոր հինգ անդամները, հետևաբար՝ Հայաստանի Հանրապետության կառավարության 2017 թվականի մայիսի 04-ի N 526-Ն որոշման 1-ին կետի 1-ին ենթակետով նախատեսված Հավելված 1-ով հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման կարգի» (այսուհետ՝ Կարգ) 26-րդ կետի 2-րդ ենթակետով սահմանված պահանջը համարվում է պահպանված, իսկ նիստն իրավազոր, որպիսի փաստով պայմանավորված Հանձնաժողովի նիստը հայտարարվեց բացված:

## ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ

1. Ընթացակարգը չկայացած հայտարարելու և անգործության ժամկետ սահմանելու մասին:

## 1. ԸՆԹԱՑԱԿԱՐԳԸ ՉԿԱՅԱՑԱԾ ՀԱՅՏԱՐԱՐԵԼՈՒ ԵՎ ԱՆԳՈՐԾՈՒԹՅԱՆ ԺԱՄԿԵՏ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հանձնաժողովի քարտուղար Լ. Հայրապետյանը Հանձնաժողովի անդամներին տեղեկացրեց, որ Ընթացակարգի շրջանակում հաղթող (ընտրված) մասնակից ճանաչված Ա/Ձ «Աշոտ Անտոնյան»-ը սահմանված ժամկետում՝ 30.04.2026թ. ներառյալ, գրավոր չի ներկայացրել պայմանագրի և որակավորման ապահովումները, պայմանագիրը և վերջիններս ներկայացնելու վերաբերյալ գրությունը:

Հաշվի առնելով վերոգրյալը, «Գնումների մասին» ՀՀ օրենքի 36-րդ հոդվածի 3-րդ կետով սահմանված պահանջների համաձայն, Հանձնաժողովը որոշեց.

1. Ա/Ձ «Աշոտ Անտոնյան»-ի կողմից ներկայացված հայտը գնահատել անբավարար և մերժել:

2. Հիմք ընդունելով գնահատման թերթիկը՝ հաստատել գնահատման հետևյալ արդյունքները.

| Չ/Հ | Մասնակցի անվանումը | Գնահատման արդյունքը |
|---|---|---|
| 1-ին | Ա/Ձ «Աշոտ Անտոնյան» | անբավարար |

Կողմ՝ 5, դեմ ՝ 0:

Հանձնաժողովը որոշեց.

1. Ա/Ձ «Աշոտ Անտոնյան»-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնել համապատասխան գործընթաց՝ «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասով սահմանված պահանջները կիրառելու նպատակով:

2. «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասով սահմանված պահանջները կիրառելու նպատակով Ա/Ձ «Աշոտ Անտոնյան»-ի հայտերը մերժելու վերաբերյալ տեղեկատվությունը ներկայացնել Մեծամոր համայնքի ղեկավարին:

3. Ընթացակարգը հայտարարել չկայացած՝ հիմք ընդունելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետով սահմանված պահանջները:

4. «Գնումների մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի համաձայն՝ անգործության ժամկետ սահմանել Ընթացակարգի շրջանակում հրապարակվող հայտարարությունները հրապարակվելու օրվան հաջորդող օրվանից մինչև 10-րդ օրացուցային օրը ներառյալ ընկած ժամանակահատվածը:

Կողմ՝ 5, դեմ ՝ 0:

*Հանձնաժողովի նախագահ՝*

Ա. Թորոսյան ________

*Հանձնաժողովի անդամներ՝*

Կ. Մահյան ________

Հ. Պետրոսյան ________

Ա. Հակոբյան ________

Ա. Զաքարյան ________

*Հանձնաժողովի քարտուղար՝*

Լ. Հայրապետյան ________